

Ա. Ս. Շառուրյան

ՍՐԲՈՒՀԻ ՏՅՈՒՍԱՐԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿԱՆՈՍԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ

Սրբուհի Տյուսաբը մեր գրականության պատմության մեջ է մտել 80-ական թվականներին լույս տեսած իր երեք վեպերով («Մայտա», «Սիրանուշ» և «Արաքսիա կամ Վարժուհին»)։ Սակայն վիպասանուհուց առաջ գործել է բանաստեղծն ու հրապարակախոսը, որը տարարախոտարար մնացել է կամ աննրկատ կամ էլ արժանացել հարևանցի ուշադրության։ Սույն հոդվածը Տյուսարի բանաստեղծական ու հրապարակախոսական ժառանգության ուսումնասիրման մի փորձ է։

1

Երբ մահացավ Մկրտիչ Պեշիկթաշլյանը, մամուլում հրապարակվեց Սրբուհի Վահանյանի (Վահանի)¹ ուսուցչի հիշատակին ձոնված նշանավոր ողբերգը, որի հետ էլ սովորաբար կապում են ապագա վիպասանուհու գրական բեմելը։ Բայց նրա բանաստեղծական ժառանգությունը դրանով չի սպառվում։ Ժամանակակիցներից շատերին հայտնի են եղել Պեշիկթաշլյանի սանուհու այլ գործեր։ Այսպես, Սրբուհի Երիցյանը պատմում է, որ տակավին ուսուցչի կենդանության օրոք «օրիորդ Սրբուհի Վահանյանի գրչի տակից դուրս եկավ մի փոքր բանաստեղծություն Թառամյալ տեբեխ՝ անունով, որ ձեռագիր Փարիզ ուղարկվեցավ Պրյուդոմ հայագետին, որպեսզի ֆրանսիերեն թարգմանե իր ժողովածուների մեջ»²։ Ավելի ուշ Գրասեր Ատոմը (Եղիա Տեմիրճիպաշյան) գրում էր, թե ինքը իմացել է, որ «Սրբուհին հատորավոր ոտանավորներ ուներ»³ և տարբեր առիթներով խոսում է «քերթողուհու» հորինած երգերի⁴, «մեծահաստոր անտիպ տաղարանի» մասին⁵։ Նույնն են հաստատում Տ. Ա.-ն (Տիգրան Արփիարյան), Արշակ Ալպոյաճյանը, Ա. Պիպեռյանը։ Այս վերջինը մասնավորապես վկայում է, որ «օր. Սրբուհի Վահանյանի անտիպ քերթվածոց ձեռագիրը» գտնվել է Պեշիկթաշլյանի ժամանակակիցներից մեկի՝ Թուլմաս Եսայանի մոտ⁶։

Ի՞նչ է եղել այդ բանաստեղծությունների ճակատագիրը, անհայտ է։ Տյուսարի մահվանից տարիներ անց միայն, սարբեր առիթներով տպագրվեցին մի քանի գործեր, որոնք թույլ են տալիս գաղափար կազմել հեղինակի բանաստեղծական գործունեության մասին։

1 «Փորձ», 1877, դիրք, որրորդ, էջ 194։

2 «Մասիս», 1880, օգոստոսի 30, № 2709։

3 «Մասիս», 1881, մայիսի 25, № 2891։

4 «Դրական և իմաստասիրական շարժում», 1885, տետր յոթերորդ, էջ 120։

5 Ա. Պիպեռյան, Հուշարձան Մ. Պեշիկթաշլյանի, Կ. Պոլիս, 1914, էջ 145, ծնթղ.։

Սակայն մինչ այդ մասին խոսելը պարզենք մի հարց. արդյոք գրողի կենդանության օրոք, Պեշիկթաշլյանի մահվան առթիվ գրված բանաստեղծությունից բացի, ոչինչ չի տպագրվել: Այս հարցին Ա. Ալպոյաճյանը բացասական պատասխան է տալիս⁶: Բայց մի հետաքրքիր փաստ գալիս է վկայելու, որ Տյուսաբը գրական ասպարեզ մուտք է գործել ավելի վաղ, քան այդ ենթադրություն է:

1939 թ. «Բազմավեպ»-ը հրապարակեց Մ. Պեշիկթաշլյանի նամակը Ա. Բաբրատունուն՝ գրված 1864 թ. մայիսին: Այդտեղ Պեշիկթաշլյանը խընդրում է տպագրության հանձնարարել իր աշակերտուհու մի բանաստեղծությունը. «Քնկալիչի բնդ գրոյս,—գրում է նա,—եւ զնամակ աշակերտուհույս Սրբուհի Վահանեան օրիորդին թողին Արզումանեանց, մի ի ջերմ զարմացողաց Ձերոց, զարմանալի եւ ինքն ուշիմութեամբն եւ քերթողասէր ախորժակօք. նամակն այն եւ ուղերձն առ Ձեզ եւ քերթուածն Դարուն յորս շիք ամենեւին սրբագրութիւն, արդինք են միամեայ աշակերտութեան իւրոյ. զԴարուն եթէ այնպէս հաճոյ թուեսցի Ձեզ, տալիք յեռու ի Բազմավեպին ի խրախոյս նմանասեռ հասակակցած»⁷:

«Բազմավեպ»-ի խմբագրությունը նույն համարում տպագրել է նաև Ս. Վահանյանի «Նամակն» ու «Ուղերձը», որոնց մասին հիշատակում է Պեշիկթաշլյանը. բայց «Դարունը» լույս էր տեսել 75 տարի առաջ՝ 1864 թ. օգոստոսյան համարում⁸:

Ինչպես Տյուսաբի գրական առաջին ելույթը՝ «Դարունն», այնպես էլ մեր ձեռքի տակ եղած մյուս բանաստեղծությունները գրաբար են և գրվել են 60-ական թվականներին:

Սրբուհի Տյուսաբի կենսագրությունից հայտնի է, որ նա լինելով ունեոր և հարգված գերդաստանի դուստր, ստացել է հիմնավոր կրթություն: 1863 թ. աշակերտելով Պեշիկթաշլյանին նա այնքան է հմտանում գրաբարին, որ գրում է նամակ ու բանաստեղծություններ: Պեշիկթաշլյանը իր սանուհու մեջ արթնացնում է սեր ու հետաքրքրություն դեպի մեր ժողովուրդն ու նրա հոգևոր մշակույթը: Սրբուհին կարգում է հայ մատենագիրներին ու ուսումնասիրում մեր պատմությունը, ծանոթանում ու հրապուրվում է Սխիթարյան գրողներով: Այդ համոզիչ կերպով երևում է Արսեն Բաբրատունու նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքից: Բաբրատունուն գրած նամակում Տյուսաբն իր հիացումն է հայտնում և գտնում է, որ «Հայկ դյուցազնի» վսեմութիւն, ոճոյն, ճոխութիւն և միանգամայն փափկութիւն իմաստից, համայն ասել ճարտարութիւն դործոյն՝ կարգեն զնա ի դաս չքնադադիւտ քերթուածոց»⁹:

6 Ա. Ալպոյաճյան, Ուսումնասիրություն Սրբուհի Տյուսաբի, Վենետիկ, 1901:

7 «Բազմավեպ», 1939, օգոստոս—հոկտեմբեր, էջ 255:

8 Բանաստեղծության վերջում, ուր սովորաբար գրվում էր հեղինակի ստորագրությունը, հանդեսի խմբագրությունը դետեղել էր հետևյալ ծանոթությունը. «Ազգային ուսումնասեր Պոլսեցի օրիորդի մի մեկ տարվա աշակերտության երկասիրությունն է եղեր այս գրվածքս, զոր ի քաջալերս իրեն ջանիցր և ի գեղեցիկ հորդոր համազդի և չանասեր օրիորդաց կր խնդրվինք չրատարակելու» («Բազմավեպ», 1864, էջ 245): Ի դեպ ժամանակակիցներից ոմանք խմացել են, որ «Դարունի» հեղինակը Տյուսաբն է: Ազգային հրեափոխան Աբրահամ Ալվադյանը, օրինակ, մի առիթով Տյուսաբին համեմատում է հին հունական քնարերգու Սաֆոյի (Սաֆո) հետ, քանի որ նա «Բնության գաղտնիք երգեց Բազմավեպին մեջ» («Մամուլ», 1882, № 905, էջ 159):

9 «Բազմավեպ», 1939, էջ 254:

Սրբուհի Վահանյանի ակնածալից վերաբերմունքը դրսևորվել է նաև նույն շրջանում գրած «Ուղերձ առ Հ. Ա. Կ. Բագրատունի» ոտանավորում¹⁰։ 23-ամյա հայուհին, անշուշտ, Բագրատունու համակրանքին արժանանալու համար, ջանացել է իր չափածո ձևերը գրել «վսեմ ոճով»։ Ավելին, նա ընդօրինակել է նաև «Հայկ դյուցազնի» տաղաչափությունը՝ ընտրելով այսպես կոչված «հայկական չափը»՝ յամբական ազատ քառանդամանի ոտանավորը։

Եթե «Ուղերձը...» գեղարվեստական տեսակետից հետաքրքրություն չի ներկայացնում, ապա «Գարունը» արդեն մատնում է հեղինակի բանաստեղծական նուրբ զգացողությունը։ Դա բնության զարթոնքի մի ոգևորված գովք է՝ հյուսված վառ երևակայությամբ ու նկարեն պատկերներով։ Բանաստեղծուհին ողջունում է գարնան գալուստը, երբ շողով ու փայլով պնդված արեղակր առատորեն լույսի փնջեր է թափում տարփելի բնության վրա։ Հառնում է բնությունը և ուրախացած լեռները, բլուրներն ու հովիտները պնդվելու հրավեր են կարդում։ «Բողոք երաժիշտքն օդային»՝ թռչունները, որ ձմռան սարսափից ոտար երկրներ էին պանդխտել, այժմ կարավան կազմած վերադառնում են։ Ահա և գեղահասակ ու փափկամեջք ծառերը, որ սիրատենչ իրար են փարում՝ միմյանց հետ խառնելով տերևներն ու երանգները և իրենց քաղցրունակ մրմունջը։ Հովտածիժաղ քնքուշ առվակը անուշ ձայնով առաջ է հոսում, և ափին մնացած անմեղ թռչնիկը իր, դողդոջուն պատկերիկն է դիտում նրա հայելում, բայց իր դայլայլին պատասխան չստանալով, տրտմած շտապում է թառել ոստիկի վրա։

«Գարուն» բանաստեղծության վրա դժվար չէ տեսնել Մ. Պեշիկթաշլյանի համանուն բանաստեղծության ազդեցությունը, որն ինչպես հայտնի է գրված է ավելի յաղ¹¹։ Աշակերտուհու մոտ նույն հովիկն է, բր գգվում է ծաղիկներին, նույն թռչնիկը, որ երգում է ծառերի միջից և նույն հանդարտիկ առվակը, միայն թե նրա քերթվածը զուրկ է ուսուցչի գողտրիկ բանաստեղծության հասարակական հնչեղությունից ու վարպետությունից։ Ս. Վահանյանի «Գարունը» թեև դարար է, բայց նույնպես գրված է պարզ, դյուրասահ տողերով։

Գեղածածան ի մորջ ծառոց
Որպէս անոյշ երգ բըխելոց,
Ձայն մ'ի լուր գայ եւ դադարի
Եւ վերստին րսկսանի¹²։

Անշուշտ, Պեշիկթաշլյանի ազդեցությամբ, Ս. Վահանյանն աշխատել է իր բանաստեղծությունը ևս երգի նմանեցնել. այդ նպատակով է նա կիրառել տարբեր չափեր, ստեղծել դյուրահունչ հանգեր, մի քանի անգամ կրկնել առաջին քառատողը։

Կարելի է հարց տալ, ինչո՞ւ Պեշիկթաշլյանը, որ աշխարհարար տաղեր էր գրում, ոչ միայն չի խանգարել իր աշակերտուհուն գրարար բանաստեղծություն հորինել, այլև նպաստել է դրա տպագրությանը։ Գրաբար բանաստեղծելը անտարակույս եղել է Սրբուհի Վահանյանի աշակերտական պարտականու-

¹⁰ «Բազմավեպ», 1939, էջ 255։

¹¹ Այս մասին տե՛ս Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1947, էջ 94, ծանոթագրություն։

¹² «Բազմավեպ», 1864, էջ 244։

թյուններից մեկը՝ որպես այդ լեզվին կատարելապես տիրապետելու մի միջոց (չմոռանա՛նք, որ «Բազմավեպի» խմբագրությունը «Գարունը» համարում է «մեկ տարվա աշակերտության երկասիրություն»):

Ժամանակագրական կարգով Ս. Վահանյանի հաջորդ գործերը կրում են «Ուղերձ սիրոյ» և «Իցէ» վերնագրերը, որոնք լույս են տեսել «Ամենուն տարեցույցում»: Սրանցից առաջինը գրված է 1867 թ., իսկ երկրորդը՝ 1868 թ. հոկտեմբերի 12-ին:

«Ուղերձ սիրոյ» ոտանավորը¹³ նվիրված է Ծերենցի դստերը՝ օր. Թագուհի Շիշմանյանին (1859—1888): Չափածո այս ձոնի մեջ Սրբուհի Վահանյանը գրվատում է Թագուհու մտավոր ընդունակությունները և ֆիզիկական բարեմասնությունները: Հեղինակի ոճն այս ոտանավորում դարձյալ վերամբարձ է. հասկացնելու համար, թե իր հերոսուհին քանի տարեկան է նա գրում է. «Ի գարնայնոյ լոկ ութ պըսակ ի գարդ գըլխոյդ գեղազանգուր» կամ որպեսզի ընդգծի նրա լեզվի ճարտարությունը, ահա թե ինչ համեմատություն է անում.

Քարոզես գեղեցկաձայն զըՍկիպիոն և զԱնիբալ¹⁴,

նւ ճարտար քո լեզուաւ ճառես զահեղ նոցուն ըզմարտ

Անցյալի պատմական նշանավոր դեմքերին վկայակոչելը, ծանրակուտակ մակդիրները, հաճախակի կրկնվող հոնտորական հարցումներն ու կոչերը վկայում են, որ Ս. Վահանյանը շարունակում էր հետևել Մխիթարյան լրանաստեղծներին:

Ի հակադրություն «Ուղերձի...», «Իցէն»¹⁵ ունի քնարական մեղմ շունչ, Սրբուհու լեզուն այստեղ իրոք անպաճույճ է, նա չի ձգտում հասնել հանդիսավորության, խոսքը չի համեմտում լազմաբարդ բառերով ու ճոռոմ արտահայտություններով: Հեղինակը պարզ ու անկեղծ արտահայտում է իր մտորումներն ու իղձերը կյանքի այլազան երևույթների հանդեպ: «Իցէն» ուշագրավ է նաև նրանով, որ գրողի հայտնի բանաստեղծություններից առաջինն է, ուր այսպես թե այնպես երևում են Տյուսաբի վաղ շրջանի հասարակական ըմբռնումները: Բանաստեղծուհին տեսնում է, որ արեգակը ջերմացնի աղքատի գետնատարած անկողինը (խշտին) և տոթակեզ ամայի վայրով անցնող մարգը աղբյուր գտնի, որ մենավոր բանտարկյալի հոգու հուրը զովացնի գթության ցողը, մայրը մահանա որդու գրկում, իսկ մանկիկը չմրմնջա «ո՛ւր թռար մայր», որ գողտրիկ կույսին շասեն «ա՛յ խարդախն»: Բայց Սրբուհին ուրիշ նվիրական ցանկություններ էլ ունի, որոնք ուսուցչի գաղափարական ազդեցության արդյունքն են.

Իցէ՛ գահուց ոճիրներէ ծանրացած

Տապալիւ Ազատութեան հրգօր շընչեն.

Իցէ՛ յիւր ծոց գըտնալ զքաջեր հայրենեաց:

¹³ Թ և ո դ ի կ, Ամենուն տարեցույց, 1915, 4. Պոլիս, էջ 159—160:

¹⁴ Ակնարկում է Կարթագենյան պորափարենը էմիլիան Սցիպիոնին (մ. թ. ա. 185—129 թթ.) և Հանիբալին (մ. թ. ա. 247—183 թթ.):

¹⁵ Թ և ո դ ի կ, Ամենուն տարեցույց, 1921, 4. Պոլիս, էջ 28:

Ինչպես Ս. Տյուսարի ստեղծագործության, այնպես էլ նրա և Մ. Պեշիկ-թաշլյանի փոխհարաբերությունների ուսումնասիրման տեսականից լայնադիվ հետաքրքրություն է ներկայացնում «Առ Քերթողն պ. Մ. Պեշիկթաշլյան. երգեա՛ Քերթող» բանաստեղծությունը, որը լույս է տեսել Ա. Պիպեռճյանի ուսումնասիրությունում¹⁶։ Հրատարակչի վկայությունից երևում է, որ Պեշիկթաշլյանի մահվան առթիվ գրած բանաստեղծությունից բացի, «հանճարեղ աշակերտուհին իր մեծ վարպետին անվան նվիրած է նաև ուրիշ քերթվածներ ալ», որոնցից մեկն էլ «Երգեա՛ Քերթողն» է¹⁷։ Մեսրոպ Ճանաշյանն այս բանաստեղծությունը համարում է Ս. Վահանյանի լավագույն գործը և ենթադրում է, թե այն Պեշիկթաշլյանի «Յիշեա՛ զիս, կոյս...» երգի պատասխանն է¹⁸։

«Երգեա՛ Քերթող» բանաստեղծության յուրաքանչյուր տողը համակված է Պեշիկթաշլյանի հանդեպ տածած քնքուշ ու խոր զգացմամբ։ Սրբուհին սիրում է դալուկ կույսի բերնից ելնող հառաչանքը, ամպերի տակ լոնյայն հեծծող լուսինը և ամեն, ամեն լա՛ն, ինչ հիշեցնում է Պեշիկթաշլյանի «սևսպարիակ» փանդիւղը։

Սրբուհի Վահանյանի մյուս գեղեցիկ բանաստեղծությունը «Ի յիշատակ պ. Մ. Պեշիկթաշլեանի» ողբերգն է, որը գրվել է ուսուցչի մահվանից (1868, նոյեմբեր 29) անմիջապես հետո և ղեկավարել «Մասիս» շաբաթաթերթի ղեկավարների 7-ի համարում։ Պեշիկթաշլյանի մահը հուզել էր մեր մտավորականությանը և նրանցից ոմանք այդ ծանր կորստի ազդեցությամբ գրել են մի շարք ոտանավորներ։ Սակայն մեծ լսանաստեղծին տված ամենասրտառուլ հրաժեշտը, նրա շիրմին դրված ամենաբուրավետ ծաղկեփունջը Սրբուհու ողբերգն էր։ Գրիգոր Օտյանի «Յրտասարսուռ մառախլապատ ի վիմէդ» ոտանավորը¹⁹ անհույզ է և զուրկ պոետական խոսքի փայլից, էդուարդ Հյուրմուզյանի դամբանագիրը²⁰ անարվեստ ու խրթին, իսկ Մինաս Զերադի «Ի մահ Պեշիկթաշլեանի» ոտանավորը²¹ աշխարհարար է, բայց ձգձգված, չոր ու ճոռոմ։ Ի տարբերություն այս գործերի, Ս. Վահանյանի ողբերգը ունի գեղարվեստական արժեք։ Արշակ Զոպանյանն այն համարում է «շատ գեղեցիկ» մի քերթված ռայնքան հզորապես հղացված, ագնավապես զգացված և հաջողապես արտահայտված է՝ հակառակ քանի մը սակավաթիվ տկար տողերու, որ կարելի չէ վարմանալ ու չցավիլ, որ այդ բանաստեղծությունն արտադրելն հետո օր. Վահանյան քնարը բոլորովին լքած ըլլա»,—գրել է նա²²։ Այդ անկեղծ ու խորապես հուզիչ բանաստեղծությունը ցույց է տալիս, թե աշակերտուհին որքան ճիշտ էր կարողացել հասկանալ իր ուսուցչին. չկա այլևս նա, ով իր քնարը ձոնել է ազգին ու հայրենիքին, որի քաղցր երգը բազմամյա խորախորհուրդ նիրհից արթնացնում էր հավերժի դուցազուններին ու իր թատերգություններում ճառել տալիս հայրենիքի փառքի, խոբահատակ տառապանքների ու բյուրավոր վերքերի մասին։ Զկա նա, որի, նվագավոր աղերսանքներին ի պա-

¹⁶ Հուշարձան Մ. Պեշիկթաշլյանի, էջ 145—147։

¹⁷ Նույն տեղում, էջ 145։ Մանթազրույթյան մեջ Պիպեռճյանը ավելացնում է, որ Թ. Եսայանը իրեն է հանձնել Ս. Վահանյանի «Երգու քերթվածներ», որոնցից նա հրատարակում է մեկը։

¹⁸ Ռազմավակ, 1949, մայիս-հունիս, էջ 105։

¹⁹ Մ. Պեշիկթաշլյան, Մատենադրությունք, Կ. Պոլիս, 1870, «Հրատարակությունն առ րեթերցողս» առաջաբանում։

²⁰ Նույն տեղում։

²¹ Մինաս Զերադ, Գրական փորձեր, Կոստանդնուպոլիս, 1874, էջ 1—4։

²² Արշակ Զոպանյան, Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 213։

տասնևհինգ հայերը պատուում էին իրենց պատանները և մերկացնելով արյունաթաթափ լանջերը՝

Յայտ առնել թե արին իւրանց շրջի ի մեզ
Թ'են նոյն մեր քաջք, նոյն մեր ոսոխք, նոյն մեր շահք²³։

Չկա նա, որի խանդավառ մեղեդիները ցրտահար սրտերում վառում են սիրո կայծը և բաժանված սրտերը միմյանց փարհլով՝ խնդարաբառ ձայնում էին. «նղրարք եմք մեք»։ Վշտարեկ աշակերտուհին մխիթարում է «մեծոգի» բանաստեղծին՝ հանգիստ ննջել. որովհետև քառասունը զարուհները, որ ապրել է նա, նրա կյանքին փառք են բարդել։

Ըստ երևույթին իրավացի է Չոպանյանը. այս ողբերգից հետո Սրբուհի վահանյանը այլևս չի բանաստեղծել²⁴։ Իհարկե, եթե պահպանված լինեին նրա բոլոր բանաստեղծությունները և տպագրվեին ժամանակին, հայ պոեզիայի վրա դարձյալ նկատելի հետք չէին թողնի։ Դատելով քննած մի քանի գործերից, դրանց թեմատիկան նեղ է, գաղափարական հագեցվածությունը թույլ, գրիչը դեռևս անվարժ, և որ առավել կարևոր է, գրված են գրաբար²⁵։ Այդ ամենը զգացել է նաև հեղինակը և այդ է պատճառը, որ տարիներ անց, երբ նա համբավվոր վիպասանուհի էր, հրատարակության չի հանձնել իր շափածո գործերը։ Բայց կորստից փրկված այդ մի քանի պատառիկներն անգամ շատ բան են ասում. դրանք ամենից առաջ օգնում են մեզ պատկերացում կազմելու Սրբուհի Տյուսաբի 60-ական թվականների ստեղծագործության մասին, պարզելու նրա ու Պեշկևիշվյանի փոխհարաբերությունների որոշ կողմեր։ Այդ գործերը խոսում են նաև Տյուսաբի բանաստեղծական անուրանալի ձիրքի մասին, որն այնքան վառ կերպով դրսևորվեց նրա գեղարվեստական արձակում։

2

Ութսունական թվականները Սրբուհի Տյուսաբի դիմավորեց ստեղծագործական ծաղկուն ուժերով։ Անցած տարիները ձևավորել էին նրա հասարակական հետաքրքրությունները, մարդասիրական անորոշ իդեոլոգիա պարող երբեմնի աշակերտուհին, ինչպիսին պատկերանում էր նա մեզ «Իցէ» ոտանավորում, դարձել էր «ընկերական ու կրոնական զեղծմանց երգվյալ հակառակորդ»։ Այժմ Տյուսաբը համակված էր մեկ նվիրական ցանկությամբ. ձեռք մեկնել տգիտության ու թշվառության մեջ թաղված հայ կնոջը և հասարակությունից նրա համար տղամարդու հավասար իրավունքներ կորզել։ Այդ պայքարը Տյուսաբը ծավալեց նախ իր հրապարակախոսության մեջ, ապա նաև, ավելի մեծ ուժով, լեպերում։

²³ «Մասիս», 1886, № 878։

²⁴ Այս տեսլով, մենք նկատի չենք առնում «Berceuse» («Օրորոցային») վերնագրով ֆրանսերեն ոտանավորը («Լույս», 1903, № 41, էջ 644), որը հորինել է Ս. Տյուսաբը դստեր Դորիի (1872—1891) օրորոցի մոտ երգելու համար։

²⁵ Հետազայում Ս. Տյուսաբը գրել է մի արձակ դրաբար «նղերդ» («Մասիս», 1880, № 2783), որտեղ նա սղում է իր ազգականուհու վաղածամ մահը։ Հետաքրքիր է, որ այդ «նղերդին» կցված նամակը աշխարհարար է։ Տյուսաբն այդպես է վարվել՝ կարծելով, որ դրաբարը ավելի հարմար է տառապալից զգացումներ արտահայտելու համար։ Դրանից հետո դրողը առհասարակ հրաժարվել է դրաբարից և ստեղծագործել աշխարհարարով, որի պաշտպանության է նվիրված նրա «Աշխարհարառ հայ լեզուն» աշխատությունը (Կ. Պոլիս, 1880)։

Մինչև Տյուսարը կնոջ ճակատագիրը մեր հրապարակախոսությունը շատ է զբաղեցրել²⁶։ Բայց պատմական նոր իրադրության մեջ, սոսկումներով հայտնի «ղուլումի» ժամանակաշրջանում, այդ հարցը շարունակում էր կարևորություն ներկայացնել։ Կինը մնում էր հասարակության ամենաճնշված ու արհամարհված անդամը։ Արևմտահայ կնոջ վիճակը լավ է նկարագրել դեմոկրատ-հրապարակախոս Գր. Զիլինկիրյանը՝ «Մոխր ու անիծվել... ծննդաբերության մեքենա մը դառնալ, մատնոցը ձեռքն թողուլ, տունին հավթուղովն և ավելին կոթի բռնելով օրերը անցուցել, խոհանոցին մեջ հոտիլ»²⁷,— ահա թե ինչի էր դատապարտված նա։

Տյուսար-հրապարակախոսը միանգամից շահագեց կնոջ ազատագրությունը դադարեցրին։ Իր առաջին՝ «Կանանց դաստիարակությունը» հոդվածում Տյուսարը գերազանցապես բավարարվում էր կրթության-լուսավորության պահանջով։ Հեղինակը կանանց կրթության խնդիրը քննում է ամբողջ ազգի առաջադիմության շահերի տեսանկյունից։ Նրա համոզմամբ իսկական առաջադիմությունը ձեռք է բերվում միայն ուսման ու բարոյական կրթության զուգակցումով։ Տյուսարը «բարոյական մարդը պատրաստելու նվիրական պաշտոնը» վերագրում է կնոջը և եզրակացնում, որ հարկավոր է բարձրել կանանց դաստիարակությունը, այն «հորդ աղբյուրը», որտեղից «մարդկությունն ապագան պիտի հոսե»։ Նման սահմանափակ բժրոհումը, սակայն, չի խանգարել նրան արծարծելու մի շարք խորապես առաջավոր մտքեր։ Տյուսարը մասնավորապես «ծուռն» է համարում այն կարծիքը, թե «բարձրագույն ուսմամբ կազդուրյալ միտք մը անկարող է լավ ամուսին և լավ մայր ըլլալու»։ Միայն կանոնավոր կրթություն ստացած կինը կարող է դառնալ լավ ամուսին, մայր և պիտանի լինել հասարակությանը։ Տյուսարը դժգոհ է եվրոպական «անհիմն» դաստիարակությունից, որ «առանց որոշ սկզբանց և հարեանցի գիտությամբ միայն կը պատրաստե կինը ընկերությանը մեջ քայլելու»։ Կանանց դաստիարակությունը պետք է ազատ լինի կրոնական ավելորդապաշտություններից ու «աշխարհային ազդեցությունից», որոնց հետևանքով կինը դառնում է մի էակ «առավել ի վնաս քան թե հօգուտ ընկերության»²⁸։

Մարտիկ Տյուսարը ցույց է տվել կրոնի անհամատեղելիությունը իսկական առաջադիմության հետ և կրթությունամբ է պայքարել կրոնական վտանգի դեմ։ «Ցորչափ ազգության զաղափարը կրոնքի գաղափարեն չի զանազանվի,— գրել է Տյուսարը,— ցորչափ կրոնքը ազատ խղճի խնդիր մը չի համարվի ու ազգությունը իրեն ժողովրդյան էական կյանքը, ցորչափ կրոնքը և ազգություններ, այս երկու ուրոշ սկզբունքները, յուրյանց սեփականացյալ, սահմանաց մեջ չամփոփվին, միության, ազգության ու հառաջագիմության բառերը սնուտի հույսեր են»²⁹։ Տյուսարն այս հոգվածում, իհարկե կրոնին դեմ չէ, նա մերժում է սոսկ կրոնական «աղետալի» վեճերը և Մ. Պեշիկթաշլյանի նման ուղադարձում ազգի «միություն» ու «եղբայրություն» գաղափարը։ Այդ պառակտումները անուղիղ կերպով «ազդը կը հուզեն, կը փեռիկտեն, եղբայր եղբոր դեմ կը

26 Այս մասին տե՛ս Ա. Հովհաննիսյանի «Նալբանդյանը և նրա ժամանակը» մենագրության առաջին դրոշ (Նրեան, 1935) երրորդ գլուխը (առաջ կնոջ ազատագրման խնդիրը)։

27 Գր. Զիլինկիրյան, Ուղեորություն ի Կոստանդնուպոլիս, Զմյուռնիա, 1883, էջ 114—115։

28 «Մասիս», 1880, № 2587։

29 Նույն տեղում, № 2528։

զինեն, վեճեր կը բանան, որոնց մեջ կը խորասուզին այնչափ ասպարոյշուն ճիգեր, երկտասարդական եռանդներ, հասուն մտանց ծնունդներ, որոնց մեջ կը փշրվին, ասփսփս, այնչափ մտավորական կարողութիւններ»:

Տյուսարը արծարծում է նաև բարոյական դաստիարակութեան հարցերը: «Լարժարաններում ո՛ր մտքեր պետք է զարգացվեն, ո՛ր պատրաստվեն «ասպարոյշ մտնողները ու մայրերը»: Հեղինակի պատկերացմամբ, կինը դպրոցից պետք է սովորի «բնականական կամ բնկերական շահը վերագասել անձնականին», ինչի հաստատակամ, առաքինի, ձեռք բերի «տնտեսական գիտութիւնը»: Մայրը պարտավոր է իր զավակից դուրս բերել ոչ միայն «բարեկիրթ» ու մեծուկ: մարդ, այլև «ազգասեր մը, որուն համար սուրբ են ազգին հատաշնքը և արուստը, սուրբ են նորա հրճմանք, սուրբ են նորա իրավունք...»: Սրանք էլ հենց կնոջ երեք՝ «ամուսնական, մայրենի և բնկերական» դերերն են:

«Կանանց դաստիարակութիւնը» հոդվածից էլ սկսվում է հրապարակախոսի ծավալած պայքարը տղամարդու և կնոջ իրավահավասարութեան համար: Նա գտնում է, որ «բնութիւնը բնկերութեան ներդաշնակութիւնը հաստատած է երկու սեռին բարոյական և մտավոր հավասար զարգացման վրա»: Սկսելով կրթութեան և դաստիարակութեան հարցերից, Տյուսարը իրավահավասարութեան այդ պահանջը շուտով տարածեց նաև մնացած բնագիտականների վրա:

Ժամանակին անբարոյացակամ քննադատները մեղադրել են Սրբուհի Տյուսարին, թէ նա հայ կնոջ համար ընդունել է լուր սիրտ ազատութեան անհրաժեշտութիւնը և նույնիսկ դրողին համարել են անբարոյականութեան ջատագով: Աւելայն ոչ միայն նրա վեպերը, այլև «Քանի մը խոսք կանանց անգործութեան մասին» ու «Կանանց աշխատութեան սկզբունքը» հոդվածները ապացուցում են, որ Տյուսարի համար հիմնականը եղել է աշխատանքի հարցը: Իրավացի էր Զատիկ Նոստանը, երբ գրում էր, որ «...Իր (Տյուսարի—Ա. Ա.) զլխավոր քննող աշխատութիւնն է»³⁰:

«Քանի մը խոսք կանանց անգործութեան մասին» հոդվածը լույս տեսավ «Թերճեմանը էֆթեար» թերթի 1881 թ. № 1212-ում, որը արտատպւեց նախ Զմյուռնիայի «Արևելյան մամուլ» հանդեսում³¹, ապա և Թիֆլիսի «Մեղու Հայաստանի» լրագրում³²:

Տյուսարն այստեղ հիմնավորում է աշխատանքի փրկարար նշանակութիւնը հայ կնոջ համար: Նա իր հարվածներն առաջին հերթին ուղղում է «բարձրագույն բնկերական դասերի դեմ», որոնք «դժբախտ օրինակ մ' եղած են խոնարհագույն դասերուն»: Հեղինակը համակրական շատ խոսքեր է ասում բնագիտականների մասին. «Կյանքը կը խոստանա հարուստին արև, մարդագետին զարմանալու ծաղկոք, վաշելք և հուշ, մինչդեռ աղքատին՝ գիշեր, սառնամանիք, զրկանք և անհասկացում: Աղքատը կենաց զոհիվերեն պիտի ելանէ, մինչդեռ հարուստն ողորկ զառիվայրեն պիտի սահի»: Քննադատներից մէկը («Քանասեր») «Մայտայի» հեղինակին համարելով խիստ ծայրահեղ, կարծում էր, թէ նա շեղվել է «Քանի մը խոսք կանանց անգործութեան մասին» հոդվածի ոգուց, որտեղ, իբր, չի ասված, թէ կանայք անհավասար են օրենքի առաջ³³:

30 «Մաղիկ», 1903, № 13, էջ 151:

31 «Արևելյան մամուլ», 1881, սեպտեմբեր, էջ 345—350:

32 «Մեղու Հայաստանի», 1882, փետրվարի 21, № 16:

33 «Մասիս», 1884, փետրվարի 8, № 3606:

Իհարկե «Մայտայի» համեմատությամբ Տյուսարն այս հոգիւմով աշխատելու մարտական չէ։ Նա այստեղ հորդորում է կնոջն աշխատել, բայց ոչ թե գոյություն ունեցող սլավոններին հարմարվելու, այլ «անկախ վիճակ» ձեռք բերելու համար։ Միայն աշխատանքով հնարավոր կլինի հասարակությանն ապացույցել, թե կինը «բարոյապես ու մտավորապես սկար համարված արարածը չէ, թե այդ կարծիքը սխալ է, թե կնոջ կաշկանդյալ կեցության անդործության, թերի կրթության, օրինաց, սովորությանց և նախապաշարմանց բռնարարության տխուր հետևանքն է»³⁴։

«Փանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածը սուրճանացավ հայ մամուլի ուշադրությանը։ Նթե «Մեղու Հայաստանի» թերթի խմբագրությունը կարծում էր, որ Տյուսարը պայքարում է «կեղծ լուսավորության» դեմ ու կոչ անում կանանց չկարվել «տնային պարապմունքից»³⁵, ապա զմյուռնահայ ակառավոր դեմոկրատ Մ. Մամուրյանը ճիշտ հասկացավ հրապարակախոսին։ «Արեւելյան մամուլ»-ի խմբագիրը համաձայն էր Տյուսարի հետ այն հարցում, թե կանանց անգործությունը մի «իրական աղետ» է ու ազգային ծանր վերք և ցանկություն էր հայտնում, որ «Ազնիվ հեղինակն բացատրելու հաճի մեզ, թե ինչ տեսակ աշխատություն կ'հարմարին մեր թշուառ հայ կանանց դասուն, ինչպես նաև հարուստին՝ մեր արդի ընկերական վիճակին մեջ...»³⁶, եվ ահա, անսալով այդ խորհրդին, Տյուսարը «Արեւելյան մամուլի» համար դրում է «կանանց աշխատության սկզբունքը» հոդվածը։

Այս հոդվածում Տյուսարը հարցն ավելի արմատականորեն է դնում։ Նա, ինչպես Մամուրյանն է նկատել, գտնում է, որ նախքան խնդրի «գործնական կողմի» մեջ մտնելը ու «հայ կանանց գործունեության առարկաները» բացատրելը, պետք է կնոջն ազատել իր ստրկական վիճակից³⁷։

Տյուսարը ցանկանում է, որ աշխատանքը լինի ոչ թե մի կտոր հաց ճարելու, «անոթութենն շմեռնիլու» աղբյուր, այլ ըմբռնվի որպես սկզբունք, լինի մի միջոց, որով կինը կարողանա հասարակության մեջ գրավել պատշաճ, տղամարդուն հավասար դիրք։

Տյուսարն, անշուշտ, չէր գիտակցում բոլոր այն պայմանների ամբողջությունը, որոնց առկայությամբ միայն կնոջ աշխատանքը երջանկություն կբերեր նրան։ Նա չէր հասկանում, որ կնոջ աշխատանքի կիրառելիության ձևը կամ չափը, նրա մասնակցությունը արտադրության պրոցեսում որոշվում է հասարակական կարգով։ Բնակավայրի Թուրքիան իր կիսաֆեոդալական, ավերված տնտեսությամբ դրա համար որևէ հնարավորություն չէր ընձեռում, իսկ եթե անգամ կնոջ աշխատանքը լայն գործադրություն գտներ, ինչպես այդ կատարվում էր կապիտալիստական զարգացած երկրներում, ապա բանվորուհին ու գեղջկուհին դարձյալ կմնային «կրկնակի ճնշված» և կշահագործվեին «չսոված ստոր, զգվելիորեն կեղտոտ, գազանորեն բիրտ» օրենքներով³⁸։ Տյուսարը կնոջ աշխատանքի հարցի լուծումը կոպտում էր նրա ազատագրման հետ և այդ, անկասկած, լավ կողմից է բնութագրում նրա աշխարհայացքը։ Այս հոդվածում է, որ հեղինակը բարձրաձայն հռչակում է կնոջ ազատագրման պահանջը։

34 «Արեւելյան մամուլ», 1881, էջ 349—350։

35 «Մեղու Հայաստանի», 1882, № 16։

36 «Արեւելյան մամուլ», 1881, էջ 345։

37 Նույն տեղում, էջ 452։

38 Լենին, Երկիր, հտ. 30, էջ 133։

«...Ի՞նչ է կինն այսօր, եթե ոչ գեղապաճույճ զոհն ընկերության... Ի՞նչ է կինը նույնիսկ քաղաքակրթյալ Ֆրանսայի հռչակավոր օրենսդրության (Code Napoléon) առջև, — ղայրույթով հարցնում է նա և ավելացնում, — Ի՞նչ է նա եթե ոչ ամուսնույն տեսակ մի ստացվածքը, ստրուկը»³⁹։ «Կինն ընկերության (իմա՝ հասարակության — Ա. Ա. Շ.) զոհն է», — Տյուսարի այս եղրակացությունը⁴⁰, ինչպես նաև նրա խորհրդածությունները օրենքի ու հասարակական հարաբերությունների մասին ոչ միայն մատնում է նրա ըմբռնումների լայնախոհությունը, այլև ցույց է տալիս, որ հրապարակախոսը, ի տարբերություն իր որոշ ժամանակակիցների, կարողանում էր խորը թափանցել երևույթների պատճառների մեջ։ Բնորոշ է այս կապակցությամբ Գրասեր Ատոմի օրինակը։ Նա Տյուսարի «Քանի մը խոսք կանանց անգործության մասին» հոդվածը համարել է «նշանավոր» ու «հոգեշունչ» և խոստովանում էր, թե տյուսարյան հայացքները «ամենախորին տպավորություն» են թողել իր վրա⁴¹։ Բայց ահա անդրադառնալով հոդվածում արծարծված խնդրին, Տեմիրճիպաշյանը զարմացած հարցնում է. «Եվ ո՞վ հնարեց այս անհավասարությունն ընդմեջ սեռերու և ընդմեջ դասերու»⁴²։

Տեսնելով կնոջ իրավագուրկ վիճակը և խիզախորեն ծառանալով դրա դեմ, Տյուսարը միամտաբար կարծում էր, թե կինը կարող է նվաճել իր ազատությունը, եթե միայն լուսավորվի ու աշխատի։ Նման պատկերացումը բխում էր հրապարակախոսի ընդհանուր աշխարհաըմբռնումից։ Հետևելով ֆրանսիական մեծ լուսավորիչներին, Տյուսարը ևս գտնում էր, որ «Մարդոց հավասարությունն անհնար դարձնող մեկ բան միայն կա — միտքերու անհավասարությունն է այն»⁴³։

Աշխատանքի դադափարը նույնպես Տյուսարը փոխ էր առել եվրոպական մտածողներից։ Գր. Չիլինկիրյանը պատմում է, թե Տյուսարը խոստովանել է, որ «Աշխատությամբ միայն կը շինվի ազգ մը» «օգտավետ ճշմարտության» հեղինակը Միրաբոն է⁴⁴։ Տյուսարը, ինչպես տեսանք, աշխատանքի պահանջը կիրառելի էր համարում նաև կնոջ նկատմամբ։ Որքան էլ այդ գաղափարը անիրագործելի լիներ ժամանակաշրջանի համար, այն օբյեկտիվորեն ստանում էր առաջադիմական նշանակություն։ Լենինը անհրաժեշտ էր համարում նկատել, որ «Կանանց ու անչափահասներին արտադրության մեջ ներգրավելն իր հիմքում առաջադիմական երևույթ է»⁴⁵։ Իհարկե, կնոջն աշխատանքի հրավեր կարողալով, Տյուսարը չէր տեսնում դրա հասարակական մեծ հետևանքները, բայց նա ելնում էր այն ճշմարիտ նախադրյալից, որ աշխատանքը կնոջը կտա տղամարդու նման ժանկախ վիճակ։

39 Արևելյան մամուլ, 1881, էջ 456։ Տյուսարի այս և մի շարք այլ մտքեր գրեթե բառացիորեն տեղ են գտել «Մայտա» լեգում (այս մեջբերումը տե՛ս Ա. Տյուսար, Երկեր, Երևան, 1959, էջ 104—105)։

40 Նույն տեղում, էջ 457։ Համեմատիր «Մայտայի» առաջարանը՝ «Կինն ընկերության ողորմելի զոհն է» (Երկեր, էջ 4) և հեղինակի օրագրության հրապարակված պատառիկները՝ «Ո՞վ է կինը, եթե ոչ զոհը մարդկային ընկերության» (Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, 1920, Կ. Պոլիս, էջ 73)։

41 «Բանախոսություն», «Մասիս», 1881, № 2982։

42 Նույն տեղում։

43 Թեոդիկ, Ամենուն տարեցույց, Կ. Պոլիս, 1914, էջ 47։

44 Գր. Չիլինկիրյան, Ուղեորություն ի Կոստանդնուպոլիս, չսյուռնիա, 1883, էջ 131։ Խոսքը հավանաբար ֆրանսիական տնտեսագետ Վիկտոր Միրարդի (Ավագի) մասին է։

45 Լենին, Երկեր, հ. 3, էջ 710։

«Հայ ընկերությունք»,—այսպես է կոչվում Տյուսաբի հրապարակախոսական վերջին հոդվածը: Այն գրված է Գր. Չիլինկիրյանի խնդրանքով և պարզում է Տյուսաբի հայացքը կրթական-լուսավորական ընկերությունների մասին: 80-ական թվականներին, ռեակցիայի թանձր խավորը խուժել էր հասարակական կյանքի բոլոր ոլորտները: Դպրոցների ու կրթական-լուսավորական ընկերությունների հիմնումը ստանում էր առաջնակարգ նշանակություն: Դրանք այն եզակի ապաստարաններից էին, ուր այսպես թե այնպես կարող էին իրենց ինքնուրույն գոյությունը պահպանել հայ լեզուն ու մշակույթը: Այդ հիանալի էին գիտակցում մեր մտավորականության ներկայացուցիչները և բնավ պատահական չէ, որ նրանցից շատերը (Հ. Պարոնյան, Գր. Զոհրապ, Ա. Արփիարյան, Մ. Մամուրյան, Գր. Չիլինկիրյան) գլխավորում էին լուսավորական շախմատների: Տյուսաբը, որ 1880 թ. լայնորեն ներգրավվել էր այդպիսի գործունեության մեջ, այս հոդվածում փորձում է պատասխան տալ այն հարցին, թե ի՞նչ կերպ կարելի է աշխուժացնել հայ ընկերությունների աշխատանքը, որոնք զուրկ էին նյութական միջոցներից ու ենթակա հալածանքների:

Թեև տարիներ շարունակ ընկերություններ են ծնվում ու անհետանում, չնայած «զանազան արգելից և դժվարությանց», նշում է Տյուսաբը, դրանց դործը չի կորչում, քանի որ «հառաջադիմական սկզբունքն երբեք չմեռնիր և լուսավորության շենքերու փլատակաց ներքև ուր նույնիսկ մահ կը մակաբերվի, կյանք կա»⁴⁶: Առաջադիմության սպասարկուներ կարող են դառնալ և՛ սրական, և՛ իգական ընկերությունները, միայն թե հարկավոր օգնություն ցույց տրվի նրանց: Մոտ երկու տարի առաջ, 1880 թ. սեպտեմբերին, Տյուսաբը պատրիարք Ներսես Վարժապետյանին առաջարկել էր յուրաքանչյուր ընտանիքից ըստ կարողության գանձել որոշ տուրք, որով հնարավոր կլիներ Կ. Պոլսում բացել մի կենտրոնական վարժարան՝ տեղացի և պանդուխտ հայ աղջիկներին ուսում տալու համար⁴⁷: Այդ առաջարկությունը թեև չիրագործվեց, բայց Տյուսաբը դրանից չէր հրաժարվել: Այժմ էլ նա կրկնում է այն միայն ավելի ընդհանրացած ձևով. «...Եթե ամեն Հայե տարեկան տուրք մ'առնվի, մեծ և որոշ հասույթ մի կը գոյանա, որով մեր ընկերությանց վիճակը կ'ապահովվի, գործող անձանց եռանդը կարժարծի՝ երբ անոնք ստույգ միջոցներ կը տեսնեն»⁴⁸: Եվ այդ ամենը մի նպատակով՝ «Դպրոցները բաղմացնենք, լույս ծավալվի ամենուրեք»:

Այս առաջարկը հավանության արժանացավ թե՛ արևմտահայերի մոտ և թե՛ բուն Հայաստանում: Զմյուռնիայում դրան արձագանքեց Գր. Չիլինկիրյանը՝ ցանկություն հայտնելով, որ Տյուսաբի այդ գաղափարները «ամեն հայաբնակ երկիրներու մեջ հռչակվեին և տարածվեին՝ այն ամեն գրագետներու և խմբագիրներու կողմեն, որք իրենց գրիչը միայն դրամ շահելու համար չեն շարժեր»⁴⁹: Տյուսաբը Երևանում ևս գտավ իր խանդավառ պաշտպանին: «Խաղունի» կեղծանվամբ մի հեղինակ հանդես եկավ ծավալուն հոդվածով, որտեղ ողջունեց այդ առաջարկը: «Թող մեր մամուլը, մեր հրապարակախոսները,—

⁴⁶ «Արևելյան մամուլ», 1882, հունիս, էջ 245:

⁴⁷ «Մասիս», 1880, № 2712:

⁴⁸ «Արևելյան մամուլ», 1882, էջ 250:

⁴⁹ Նույն տեղում, էջ 243:

գրում էր նա, — անուշադիր շման հայասեր տիկին Տյուսաբի այս երկրորդ առաջարկին ևս, թող արժարժեն այս միտքը: Լեյդ դժվարին մտքի իրագործման մեջ մենք տեսնում ենք ազգի միության մեծ խնդիրը»⁵⁰:

Այս առաջարկը ևս գործնական կիրառում չգտավ, բայց այն մնում է Տյուսաբի լուսավորական ծրագրի հանգուցային կետը:

Տյուսաբ-հրապարակախոսը ֆախապատրաստեց Տյուսաբ-վիպասանուհուն: Նրա վեպերը, հատկապես «Մայտան», ոչ միայն արժարժում են իր հոգ-վածների առաջադրած կենտրոնական հարցը՝ կնոջ ազատագրության խնդիրը, այլև տոգորված են հրապարակախոսական շնչով:

⁵⁰ «Պսակ», 1882, դեկտեմբերի 4, № 31: